ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓԱՓՈՒԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (soft skills) ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԾԱՎԱԼՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (longread) ՄԻՋՈՑՈՎ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.82

Ամփոփում

Արագ փոփոխվող աշխարհում ուսանողի փափուկ հմտությունների (soft skills) ձևավորումը շարունակում է լինել մասնագիտական կրթության համակարգի կարևոր մարտահրավերներից: Դրանց զարգացածությամբ է պայմանավորված նաև շրջանավարտի ապագա մասնագիտական հաջողությունները:

Փափուկ հմտությունները (soft skills), ընդհանուր առմամբ, դիտարկվել են որպես անձի գործնական, հաղորդակցական և կառավարչական ունիվերսալ որակներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կամ լավագույնս կատարել հանձնարարված առաջադրանքները՝ ապահովելով ցանկալի արդյունք:

Հետազոտությունը բացահայտում է լրագրության բակալավրիատում սովորողների փափուկ հմտությունները, նրանց վերաբերմունքը և գնահատականը նախանշված 10 հմտություններին: Վերջիններս ձևավորվել են ինչպես միջազգային տարբեր հետազոտությունների, այնպես էլ Հայաստանի մի շարք գործատուների ու անձնակազմի պատասխանատուների հետ կատարված հարցազրույցների միջոցով: Փափուկ հմտությունների ընտրությունը կատարվել է նաև հաշվի առնելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում զանգվածային լրատվամիջոցների աշխատանքի կազմակերպման առնձնահատկությունները: Մասնագիտական առաջադրանքի՝ մուլտիմեդիա ծավալուն պատմության (longread) պատրաստման գործընթացում դիտարկվել են փափուկ հմտությունների ազդեցությունը և դրանց նկատմամբ ուսանողների վերաբերմունքի փոփոխությունը ինքնավերլուծության միջոցով: Մուլտիմեդիա ծավալուն պատմությունը (longread) լրագրողական այն արտադրանքն է, որի ստեղծման համար գաղափարական և ստեղծագործական համագործակցությունը պարտադիր պայման է: Այն միաժամանակ ենթադրում է լրագրողական տարբեր նյութերի (տեսալսողական և անիմացիոն նյութեր, լուսանկարներ,

գրաֆիկներ, քարտեզներ և այլն) ու ժանրատեսակների օգտագործում, որոնք ներդաշնակորեն համադրվում են մեկ ամբողջության մեջ:

Հետազոտության արդյունքում առաջ է մղվել այն մոտեցումը, որ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում փափուկ հմտությունների զարգացումն արդյունավետ է դիտարկել մասնագիտական առարկաների ուսուցման և առաջադրանքների կատարման շրջանակում, որովհետև անհամեմատ բարձր է ուսանողների մոտիվացիան: Կարևորվել է նաև յուրաքանչյուր ուսանողի համար փափուկ հմտությունների զարգացման անհատական մշակված «ճանապարհային» ծրագրի առկայությունը, որը կարող է դառնալ հետագա մասնագիտական հաջողությունների գրավականը:

Բանալի բառեր և արտահայտություններ. լրագրության բակալավրիատ, փափուկ հմտություններ (soft skills), մուլտիմեդիա ծավալուն պատմություն (longread), ինքնավերլուծություն, անհատական «ճանապարհային» ծրագիր, մրցունակություն:

Ներածություն

Մասնագետի մրցունակությանն ուղղված աշխատաշուկայի պահանջները և հաջողության հասնելու նախապայմանները չեն սահմանափակվում շնորհված որակավորման կամ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների տիրապետման աստիճանով: Փափուկ հմտությունների (soft skills) զարգացման խնդիրը տարբեր ժամանակներում եղել է գիտնականների և հետազոտողների հետաքրքրությունների առանցքում: Տեսական բազմաթիվ նյութերի և գիտական հետազոտությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ առկա չէ ինչպես փափուկ հմտություններ հասկացության, այնպես էլ դրա բաղադրիչների ու որոշիչների սահմանման միասնական մոտեցում: Միաժամանակ առկա է դրա կարևորության, բոլոր ոլորտներում հաջողության հասնելու համար դրա նշանակության միասնական գնահատումը: Soft skills, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «փափուկ» կամ «ճկուն» հմտություններ, Օ. Աբաշկինան համարում է մարդկային հատկանիշներ, որոնք չեն վերագրվում որևէ մասնագիտության և անհրաժեշտ են նույնիսկ լավագույն մասնագետին արդյունքի հասնելու համար (1): Դրանք դիտարկվում են նաև որպես անձի գործնական և կառավարչական ունիվերսալ որակներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կամ լավագույնս կատարել առաջադրանքներն ու հասնել հաջողության (10):

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հասարակության լայն շերտերի, այդ թվում նաև ուսանողների մեջ առկա այն թյուր կարծիքով,

որ աշխատանքում հաջողության հասնելու համար բավարար են մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Տարաբնույթ մեկնաբանությունների է արժանանում այն իրողությունը, որ հաճախ ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմությամբ աչքի չընկնող ուսանողը մասնագիտական ոլորտում ունենում է մեծ հաջողություն: Այս համատեքստում հիմնավորված է ներկայացնել Google ընկերությունում կատարված հետազոտությունը, որը վերաբերում էր գործունեության տասնհինգ տարիների ընթացքում մասնագետների աշխատանքի ընդունման, ազատման և առաջխաղացման տվյալների վերլուծությանը: Հետազոտությունն իրականացնող կազմակերպությունը եզրակացրել է, որ Google-ի լավագույն աշխատակիցների ամենակարևոր ութ հատկանիշների շարքում գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) գիտելիքներն ու հմտությունները վերջինն են: Google ընկերությունում հաջողության հիմնական յոթ բնութագրիչները փափուկ հմտություններն են եղել (13): Հետևաբար, դրանց ձևավորումն ու զարգացումը ոչ միայն անձի աշխատանքային հաջողության, այլև որակյալ և մրցունակ մասնագիտական կրթության գործընթացի կարևոր նպատակներից է:

Հետազոտության նպատակն է բացահայտել լրագրության բակալավրիատի ուսանողների մոտեցումները փափուկ հմտությունների նշանակության վերաբերյալ և մուլտիմեդիա ծավալուն պատմության պատրաստման գործնական աշխատանքի միջոցով նպաստել դրանց արժևորմանը՝ նպաստելով ինքնակատարելագործման համար անձնական ճանապարհային ծրագրերի մշակմանը: Փափուկ հմտությունների բացահայտման և զարգացման համար ընտրվել է մուլտիմեդիա ծավալուն պատմության (լոնգռիդ) պատրաստումը՝ մասնագիտական առարկայի («Հեռուստառադիոլրագրողի վարպետություն») գործնական աշխատանքների շրջանակում: Ընտրության համար հիմք են ծառայել մի շարք գործոններ, մասնավորապես համապատասխան բովանդակության մատուցման համար մեդիա գործիքների օգտագործման լայն հնարավորությունը, ստեղծագործական համագործակցությունը, զգացմունքային շերտի առկայությունը, նյութի ծավալի ու տևողության նկատմամբ խիստ սահմանափակումների բացակայությունը և այլն: Գործնական աշխատանքի կատարման համար դիտարկվել են մուլտիմեդիա ծավալուն պատմության (լոնգռիդ) ժամանակակից հետազոտողների ու տեսաբանների աշխատությունները, ինչպես նաև տարբեր լրագրողական կազմակերպությունների պատրաստած նյութերը:

Սույն հետազոտության նորույթն այն է, որ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ուսուցմանը զուգընթաց առաջ է մղվում

փափուկ հմտությունների ձևավորման ու զարգացման կարևորությունը՝ որպես ստեղծագործական գնահատելի արդյունք ստանալու պայման: Նման մոտեցումն առավել տեսանելի է դարձնում ուսանողի մասնագիտական հաջողության հասնելու համար փափուկ հմտությունների զարգացման անձնական «ճանապարհային» ծրագիր ունենալու անհրաժեշտությունը:

Մեթոդաբանությունը

Հետազոտության համար օգտագործվել են տեսության համեմատման, համադրման և վերլուծության մեթոդները՝ հիմք ընդունելով հիմնախնդրին առնչվող գիտամեթոդական գրականությունը և տեղեկատվական աղբյուրները: Ձևավորված խմբերի միջև և խմբերում ընդգրկված մասնակիցների շրջանում օգտագործվել է փոխազդեցությունների մանկավարժական դիտարկման և գործընթացի արդյունքների, ինչպես նաև աշխատանքի կատարման վերաբերյալ մասնակիցների ազատ գնահատման ու թեստային ինքնագնահատականների վերլուծության մեթոդները: Մուլտիմեդիա ծավալուն պատմության (լոնգռիդ) պատրաստումը, որը ուսանող-լրագրողների մասնագիտական առարկայի առաջադրանքներից է, նախատեսում է խմբային ստեղծագործական աշխատանքի կատարում: Գործընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին դրսևորել այն փափուկ հմտությունները, որոնք անհրաժեշտ են արդյունքի հասնելու համար, ինչպես նաև այդ առումով բացահայտել յուրաքանչյուրի թույլ կողմերը: Մանկավարժական դիտարկման արդյունքների օբյեկտիվությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով իրականացվել է թվային համարժեքներով գնահատման և ինքնագնահատման թեստավորում, վերլուծական աշխատանքի կատարում, զրույցների և առանձին հարցազրույցների իրականացում: Հետազոտության նպատակի կատարմանը միտված խնդիրներ են դիտարկվել.

1. փափուկ հմտությունների (soft skills) բացահայտումը,
2. ուսանողի փափուկ հմտությունների ինքնավերլուծությունը,
3. փափուկ հմտությունների ազդեցությունը մուլտիմեդիա լրագրողական պատմության մասնագիտական որակի վրա,
4. աշխատանքի ընթացքի վերլուծությունը և գնահատումը,
5. փափուկ հմտությունների, որպես մրցակցային առավելության վերագնահատումը:

Քննարկում

Գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ աշխատաշուկայի պահանջների փոփոխությունը մասնագիտական կրթության ոլորտին պարտադրում է լինել անընդհատ բարեփոխումների

գործընթացում: Հակառակ պարագայում անխուսափելի է դառնում ինչպես մասնագիտական կրթության առաքելության տապալումը, այնպես էլ մրցունակության անկումը՝ դրանից բխող հետևանքներով: Մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացման և անձի մասնագիտական առաջխաղացման համատեքստում փափուկ հմտությունների (soft skills) զարգացման խնդիրը տարբեր ժամանակաշրջաններում դիտարկվել են առաջնային: Ավելի քան հարյուր տարի առաջ Չիկագոյի համալսարանի պրոֆ. Չարլզ Ռ. Մանն իրականացրել է հետազոտություն ինժեներական կրթության արդյունավետության վերաբերյալ: Ավելի քան 7 հազար ինժեներների շրջանում կատարված հետազոտությամբ հաստատվել է, որ անձնական այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են ողջախոհությունը, բարեխղճությունը, նախաձեռնողականությունը, տակտը, հավաքվածությունն ու կարգապահությունը, բծախնդրությունը և պատասխանատվությունը պակաս կարևոր չեն պրոֆեսիոնալ ինժեների համար, քան տեխնիկական գիտելիքներն ու հմտությունները: Այդ ժամանակաշրջանում ինժեներական դպրոցներն իրենց հիմնական նպատակ են դիտարկել ժամանակակից գիտության և տեխնիկայի զարգացմանը համահունչ քայլելը: Ուսումնական ծրագրերն այնքան են ծանրաբեռնվել մասնագիտացված դասընթացներով, որ ուսանողների համար գրականությունը և սոցիոլոգիան դարձել են ձանձրալի աշխատանք: Ըստ հետազոտության՝ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ազնվությունը, նախաձեռնողականությունն ու ողջախոհությունը, որոնք հնարավոր չէ սովորեցնել դիդակտիկ եղանակով, կարող են ուսանողների շրջանում խթանվել, խրախուսվել կամ ճնշման ենթարկվել (11):

Շուրջ հարյուր տարի անց «Աշխատանքային հարաբերություններ. հիմնական փափուկ հմտություններ, որոնք նպաստում են երիտասարդ աշխատուժի հաջողությանը» հետազոտության մեջ փափուկ հմտությունները են դիտարկվում վարքագիծը, վերաբերմունքը և անձնական հատկությունները, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս արդյունավետ կողմնորոշվել իրենց միջավայրում, լավ աշխատել ուրիշների հետ, լավ կատարել իրենց աշխատանքը և հասնել նպատակներին (12):

Մասնագիտական ոլորտում մարդու հաջողության 85%-ը կախված է փափուկ հմտություններից: Այդ է պատճառը նաև, որ մրցութային թեստավորման կամ հարցազրույցների ժամանակ ներկայացվում են հարցեր, որոնք գործնականում կապված չեն տվյալ աշխատանքի կատարման մասնագիտական կարողությունների հետ: Գործատուների 93%-ի մոտ աճում է աշխատողի փափուկ հմտությունների նկատմամբ

հետաքրքրությունը, որը կարելի է բացատրել տնտեսության փոփոխությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ (4): Փափուկ հմտությունները կարող են կանխատեսելի դարձնել նաև անձի ինքնաիրացման հնարավորությունները: Հիմնական հաղորդակցական կարողությունները (հաղորդակցական-անձնական ներուժի իրացում), ինքնակառավարման հմտությունները (գիտելիքներ ձեռք բերելու մոտիվացիա, ռեֆլեկսիվ որակներ) և արդյունավետ մտածողությունը (կանխատեսելու ունակություն, նորարարություն) մեծացնում են անհատի հոգեբանական կայունությունը, կյանքի դժվարություններին դիմակայելու, բազմաբնույթ խնդիրներ լուծելու պատրաստությունը և վարքագծի ազատությունը (9): Փափուկ հմտությունների զարգացման ուղղությամբ կարևոր է խթանել ուսանողի շահագրգռվածությունը, որովհետև անձնական որակների արդյունավետությամբ է պայմանավորված նրա մրցունակությունն ու մասնագիտական առաջընթացը (3): Տ. Անանևան, հիմք ընդունելով Համաշխարհային տնտեսական ֆորումի /World Economic Forum/ վերլուծաբանների հետազոտությունները, ըստ առաջնահերթությունների, սահմանում է այն փափուկ հմտությունները, որոնք պահանջված են լինելու, մասնավորապես՝ բարդ խնդիրներ լուծելու ունակությունը, քննադատական մտածողությունը, ստեղծագործականությունը, մարդկանց կառավարման կարողությունը, համակարգման հմտությունները, զգացմունքային ինտելեկտը, դատողությունը և որոշում կայացնելու կարողությունը (ոչ միայն որակը, այլև որոշումների կայացման արագությունը), միտվածությունը՝ շահառուների ակնկալիքների բավարարմանը, բանակցելու ունակությունը, ճանաչողական ճկունությունը (2):

Փափուկ հմտությունների զարգացման խնդրին իրենց հետազոտություններում անդրադարձել են Ռ. Վարդանյանը, Դ. Տատաուրշչիկովան, Յու. Պորտլանդը, Ի. Կանարդովը, Օ Բարինովան, Ե. Գայդուչենկոն, Մ. Չուրկինան և ուրիշներ:

Մուլտիմեդիա ծավալուն պատմությունը (multimedia longread) ժամանակակից նշանակությամբ առաջին անգամ պատրաստել է Նյու Յորք թայմսը (The New *York* Times)՝ նախագիծը կոչելով «Ձյան ծածկույթ. ձնահոս թունել Քրիքում» (Snow Fall.The Avalanche at Tunnel Creek): Ներկայացվել է ԱՄՆ-ում տեղի ունեցած ձնահոսի ողբերգական պատմությունը, որից տուժել են մի խումբ լեռնադահուկորդներ: Նախագծի հաջողությունը հետագայում հիմք է դրել մուլտիմեդիա մի շարք պատմությունների ստեղծմանը, որոնք իրականացրել են տարբեր երկրների կազմակերպություններ ու լրատվամիջոցներ:

Մուլտիմեդիա ծավալուն պատմությունը (լոնգռիդ) պատմվածքի օրինակով ստեղծագործություն է, որն ունի հերոս, սյուժե, կառուցված դրամատուրգիա, սակայն զգալիորեն տարբերվում է ավանդական պատմվածքից իր մուլտիմեդիա «հավաքածուով»: «Մուլտիմեդիա» սովորաբար համարվում է այն արտադրանք-ստեղծագործությունը, որը ներառում է տարբեր տեսակի բովանդակություններ (տեսանյութ, աուդիոնյութ, ֆոտո, ինչպես նաև գրաֆիկա, անիմացիա, տեքստ): Մուլտիմեդիայի յուրահատկությունը սինկրետիզմի (միավորման), հաղորդակցման ծայրահեղ տարբեր ուղիների համատեղելիության, տրամաբանորեն միմյանց լրացնելու և շարունակականության ապահովելու մեջ է (8): Ս. Սիմակովան այն ներկայացնում է որպես լրագրողական ստեղծագործության և գրագետ համադրման օրինակ, որի հիմքում երկար տեքստն է և դրան հաջորդող տեսողական բովանդակությունը (7): Ըստ Մ. Լուկինայի՝ մուլտիմեդիա հոդվածը մի պատմություն է, որը ներկայացվում է մի քանի մեդիա գործիքների միջոցով: Այն կառուցվում է այնպես, որ մի կողմից յուրաքանչյուր բաղադրիչ լրացնում և զարգացնում է ընդհանուր պատմությունը, մյուս կողմից՝ դրանցից մեկի անհասանելիությունը չի խեղաթյուրում սյուժեի ընդհանուր իմաստը (6): Դ. Կաչանովի կարծիքով մուլտիմեդիա նախագծերն օգնում են գրավիչ ձևաչափերով «փաթեթավորել» գիտելիքները, տեղեկությունը, պատմությունները. «Մուլտիմեդիա լրագրողական պատմություններում իմաստը ընկալվում է միաժամանակ գեղագիտական և ռացիոնալ ճանաչողության, զգայական և տրամաբանական ընկալման միջոցով» (5):

Իրենց հետազոտություններում մուլտիմեդիա ծավալուն պատմության (լոնգռիդ) հարցերին անդրադարձել են Մ. Գրիգորյանը, Ա. Գալուստյանը, Ա. Անյուխինան, Գ. Ամիրխանովան, Մ. Բոնդարենկոն, Կուլչիցկայան, Ա. Կալմիկովան, Կ. Ջորդանը, Ռ. Պեկերը, Ջ. Ստիվենսը և ուրիշներ:

Լրագրողի մասնագիտությունը, առանցքում ունենալով անհատական ստեղծագործումը, մասնագետին ներկայացնում է պահանջներ, որոնք դժվար է ներգրավել աշխատանքային պայմանագրերի իրավական տիրույթում: Այս համատեքստում կարող է դիտարկվել աշխարհի տարբեր երկրներում գործող, միջազգային և ազգային լրատվական կազմակերպությունների, ինչպես նաև առանձին լրատվամիջոցների կողմից հաստատված վարքականոններն ու էթիկայի նորմերը: Դրանց հիմնական պահանջները վերաբերում են լրագրողի աշխարհայացքին, արժեքային համակարգին, վարքագծին, բարոյական նկարագրին ու փափուկ հմտություններին՝ ներառելով նույնիսկ անձնական հատկանիշներ: Հետևաբար, փափուկ հմտությունները լրագրողի

գործունեության համար կարող են դիտարկվել որոշակի առումով որպես մասնագետին ներկայացվող «պարտադիր» պայմաններ:

Փափուկ հմտությունների բացահայտման ու զարգացման խնդիրը մասնագիտական առարկայի շրջանակում դիտարկելը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես.

- մասնագիտական առարկաների և ոչ մասնագիտական կամ լրացուցիչ դասընթացների նկատմամբ ուսանողների վերաբերմունքն ու մոտեցումներն էականորեն տարբերվում են,
- մասնագիտական առարկա դասավանդող դասախոսներն ուսանողների կողմից ընկալվում են որպես մենթորներ կամ ավագ գործընկերներ,
- մասնագիտական առարկաները սովորելու ուսանողների մոտիվացիան ամենաբարձրն է,
- մասնագիտական առարկաներից ուսանողի առաջադիմությունը հիմնականում ուղիղ համեմատական է խմբում նրա նկատմամբ այլոց վերաբերմունքին:

Սույն գործոնների առանձնացման համար հիմք են հանդիսացել ուսանողների և դասախոսների հետ կատարված հարցախույզները:

Փափուկ հմտությունների ցանկի ձևավորման համար հիմք են հանդիսացել Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակում /World Economic Forum/ 2019 թվականի համար հրապարակված, «Աշխատանքային հարաբերություններ. հիմնական փափուկ հմտություններ, որոնք նպաստում են երիտասարդ աշխատուժի հաջողությանը» հետազոտությունները, Տ. Անանևայի, Ա.Ցիմբալյուկի և Վ. Վինոգրադովայի հրապարակումները: Հետազոտության հարցաթերթիկներում փափուկ հմտությունների ցանկը կազմվել է Երևանի և Շիրակի մարզի շուրջ 40 կազմակերպությունների ղեկավարների և անձնակազմերի պատասխանատուների հետ կազմակերպված հարցազրույցների ու հարցումների արդյունքում: Հարցաթերթիկում ընդգրկվել են հետևյալ հմտությունները. պատասխանատվություն, քննադատական մտածողություն, հաղորդակցում, ստեղծագործականություն /կրեատիվություն/, մարդկանց կառավարում, զգացմունքային ինտելեկտ, ժամանակի կառավարում, ինքնուսուցում, թիմային աշխատանք, ինքնամոտիվացիա: Թյուրընկալումներից խուսափելու համար հարցաթերթիկին կից խմբի անդամներին տրվել է նշված փափուկ հմտությունների բացատրությունը: Հետազոտության նախնական տվյալների հավաքագրման համար կազմակերպված հարցման առաջին հարցը ձևակերպված էր. «Ներկայացված 10 հատկանիշներից, որոնք, ըստ Ձեզ, նպաստելու են

մասնագիտական ոլորտում հաջողության հասնելու համար, ընտրել 8-ը և դասավորել ըստ կարևորության և առաջնահերթության»:

Ստացված տվյալների վերլուծությամբ փափուկ հմտությունների առաջնահերթության հնգյակում են պատասխանատվությունը (73,8%), ինքնամոտիվացիան (67,1%), հաղորդակցումը (52,1 %), ժամանակի կառավարումը և ստեղծագործականությունը (47,5%): Վերջին եռյակում են զգացմունքային ինտելեկտը (33,3 %), թիմային աշխատանքը (29,6 %) և մարդկանց կառավարումը (8,8 %): Միջին ցուցանիշներ համապատասխանաբար (47,1% և 40,4%) ունեն քննադատական մտածողությունը և ինքուսուցումը: Երկրորդ հարցին, թե նշված փափուկ հմտություններից ընտրեք 3 հատկանիշ, որոնք ձեզ մոտ զարգացած չեն, ուսանողների պատասխանները, ըստ վարկանշային գնահատման, համապատասխանաբար բաշխվել են՝ ինքնամոտիվացիա, մարդկանց կառավարում, քննադատական մտածողություն, զգացմունքային ինտելեկտ, ժամանակի կառավարում, ինքնուսուցում, ստեղծագործականություն, թիմային աշխատանք, հաղորդակցում, պատասխանատվություն: Ըստ տվյալների՝ պատասխանատվությունը, ինչպես նաև հաղորդակցումը, թիմային աշխատանքը և քննադատական մտածողությունը, որպես կարևոր փափուկ հմտություններ, ուսանողների շրջանում զարգացած են: Դիտարկենք իրենց ինքնավերլուծության և ինքնագնահատականի շրջանակում ներկայացված չզարգացած հմտությունների առաջնային եռյակը: Ինքնամոտիվացիան, որի առաջնահերթության տոկոսային ցուցանիշը երկրորդն է, վարկանշային գնահատմամբ գրավել է առաջին տեղը, որպես չզարգացած: Ինքնամոտիվացիան հարցաթերթիկում ներկայացված էր որպես նախաձեռնություն ցուցաբերելու կարողություն՝ նպատակներին հասնելու, առաջադրանքները կատարելու և առաջ շարժվելու համար: Ներքին ուժ, որը մղում է կատարելու առաջադրանքները ոչ թե ստիպված, այլ ցանկությամբ: Այս համատեքստում տրամաբանական է դառնում մարդկանց կառավարման հմտության զարգացածության վերաբերյալ ուսանողների տված գնահատականը: Այն ներկայացվել էր որպես մարդկանց մոտիվացնելու, զարգացնելու և ուղղորդելու՝ կոնկրետ աշխատանքի հարմար թեկնածուներ բացահայտելու հմտություն: Ուսանողների չզարգացած երրորդ հմտությունը ինքնուսուցումն է, որը հարցաթերթիկում ներկայացված էր, որպես ունակություն, որը հնարավորություն է տալիս սովորել ողջ կյանքի ընթացքում և ինքնուրույն ձեռք բերել հմտություններ արագ փոփոխվող աշխարհում: Վերոնշյալ երեք հմտությունների բացակայությունը կամ ոչ պատշաճ զարգացման աստիճանը սպառնալիք է ստեղծում ոչ միայն հետագա մասնագիտական

ոլորտում հաջողությունների հասնելու համար, այլև իջեցնում կրթության արդյունավետությունը:

Այն հարցին, թե որտեղ և ինչպես են պատրաստվում զարգացնել տվյալ հմտությունները, ուսանողների 78,9%-ն ակնկալում է իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատությունում, 7,9%-ը՝ լրացուցիչ դասընթացների միջոցով, 2,6%-ը՝ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում, 10,5%-ը՝ դժվարացել է պատասխանել: Նման տոկոսային բաշխվածությունը մեկ անգամ ևս ապացուցում է փափուկ հմտությունների զարգացման կարևորությունը և ընդգծում, որ դրանց միտված ծրագրերի և գործընթացների իրականացումը կբարձրացնեն բարձրագույն կրթության համակարգում ուսանողների գոհունակության աստիճանը:

Մուլտիմեդիա պատմության (լոնգռիդ) պատրաստում գործնական աշխատանքը մասնագիտական առարկայի շրջանակում սույն հետազոտության մեջ ունի դիտարկման երկու ուղղություն. փափուկ հմտությունների բացահայտման, զարգացման և մասնագիտական, որը սույն հոդվածի շրջանակից դուրս է: Մուլտիմեդիա պատմության (լոնգռիդ) պատրաստումը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.

- այն ապահովում է ստեղծագործական ազատություն ինչպես տեղեկության ծավալի ու բազմանության, այլև զգացմունքային դրսևորման առումով,
- նյութի թեման ունի հանրային կարևորություն և հետաքրքրություն, սակայն չի պահանջում օպերատիվություն,
- յուրաքանչյուր ուսանողի տալիս է իր մրցակցային առավելությանը համապատասխան մեդիա գործիքից օգտվելու հնարավորություն,
- ենթադրում է կազմակերպված թիմային աշխատանք,
- պահանջում է ստանձնել պատասխանատվություն ոչ միայն մեկ հատվածի, այլև ամբողջ արդյունքի համար:

Գործնական աշխատանքի մասնագիտական գնահատումից հետո դիտարկվել են փափուկ հմտությունների ազդեցությունն աշխատանքի ցանկալի որակի վրա, մասնավորապես, աշխատանքի կատարմանն ինչ հմտություններ են նպաստել, որոնց բացակայությունն է խոչընդոտել. հաջորդ աշխատանքային թիմի ձևավորման համար ուսանողի ի՛նչ հմտություններ են առաջնահերթ ընդունվելու:

Ըստ ստացված տվյալների՝ աշխատանքի ցանկալի արդյունք ունենալուն նպաստել են հետևյալ հմտությունները՝ պատասխանատվությունը (62,5%), թիմային աշխատանքը (61,9%), ստեղծագործականությունը (57,4%), քննադատական մտածողությունը (52,5%): Վարկանշային գնահատմամբ որպես առաջնահերթ խոչընդոտների

եռյակ է նշվել ինքնամոտիվացիան, ինքնուսուցումը, ժամանակի կառավարումը: Վերջինս հարցաթերթիկում ներկայացված էր որպես ժամանակի համակարգման և բաշխման հմտություն, որը բարձրացնում է մարդու գործունեության արդյունավետությունը և խնայում ռեսուրսները:

Հատկանշական է, որ նոր աշխատանքային թիմերի ձևավորման համար առաջնահերթ փափուկ հմտությունների քառյակում ընդգրկվել են թիմային աշխատանքը (72,2%), ինքնամոտիվացիան (68,7%), պատասխանատվությունը (64,3%), ինքնուսուցումը (57,3%): Բարելավվել է նաև ժամանակի կառավարման ցուցանիշը (56,7%): Այս հմտությունն արժանի է առավել ուշադրության, որովհետև ուսանողները հաճախ ամեն ինչի համար ժամանակ գտնում են, բացի կրթությունից: Ժամանակի անբավարարությունը կամ ոչ արդյունավետ կառավարումը ազդում է ինչպես ուսանողի առաջադիմության, այնպես էլ ամբողջ կրթական գործընթացի զարգացման վրա:

Եզրակացություններ

Զրույցների, հարցախույզների և վերլուծական աշխատանքի շրջանակում բացահայտվել է, որ ուսանողների մեծ մասը վերանայել է իր փափուկ հմտությունները և դրանց զարգացումը դիտարկում է սեփական նախաձեռնությունների շրջանակում, մասնավորապես 82%-ն արդեն ունի անհատական «ճանապարհային» մշակված ծրագիր: 12%-ը ևս կարևորում է սեփական նախաձեռնությունը և կարծում է, որ մինչև ուսումնառության ավարտն այդ հմտություններին տիրապետելու է: 6%-ը տվել է տարբեր պատասխաններ, մասնավորապես, դժվարացել է պատասխանել, դեռևս այդ խնդիրն առաջնային չի դիտարկել և այլն:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել.

- մուլտիմեդիա ծավալուն պատմությունն այն ձևաչափն է, որը նպաստում է լրագրող-ուսանողներին բացահայտել և առաջին պլան բերել սեփական փափուկ հմտությունները,
- մուլտիմեդիա ծավալուն պատմության հետ աշխատանքը, ի տարբերություն այլ առաջադրանքների, հնարավորություն է տալիս լրագրող-ուսանողներին անձնական փորձով կարևորել փափուկ հմտությունները և նպաստում դրանց զարգացման անհատական ծրագրերի մշակմանը,
- փափուկ կամ վերմասնագիտական հմտությունների զարգացման նպատակադրումը մասնագիտական առարկաների շրջանակում առավել արդյունավետ է դարձնում գործընթացը,

- ինքնամոտիվացիայի և ինքնուսուցման փափուկ հմտությունների զարգացումը ոչ միայն հիմքեր է ստեղծում ապագա մասնագիտական գործունեության հաջողության, այլև կրթական գործընթացն առավել նպատակային դարձնելու համար:

Ուսանողների փափուկ հմտությունների զարգացումն ընդունելով՝ որպես լրագրողական բարձրագույն կրթության կարևոր նպատակներից՝ հիմքեր են ստեղծվում ոչ միայն ապագա մասնագետների մրցունակության ապահովման, այլև աշխատաշուկայի պահանջների ու կրթության արդյունքի համապատասխանության համար: Վերջինս յուրաքանչյուր մասնագիտական ուսումնական հաստատության կրթության որակի և մրցունակության դրսևորման լավագույն ցուցիչն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Абашкина О. Soft skills: ключ к карьере. [Электронный ресурс]. URL: http://www.pro-personal.ru/article/7811-soft-skills-klyuch-k-karere (Дата обращения: 23.04.2023).
2. Ананьева Т. Десять компетенций, которые будут востребованы в 2020 году [Электронный ресурс]. URL: http://www.tananyeva.com/single-post/ (Дата обращения: 22.04.2023).
3. Бацунов С. Н., Дереча И. И., Кунгурова И. М., Слизкова Е. В. Современные детерминанты развития soft skills // Научно-методический электронный журнал «Концепт». – 2018. – № 4 (апрель). – С. 198–207. – URL: http://e-koncept.ru/2018/181018.htm. (дата обращения: 26.04.2023).
4. Ивонина А.И., Чуланова О.Л., Давлетшина Ю.М. Современные направления теоретических и методических разработок в области управления: роль soft-skills и hard skills в профессиональном и карьерном развитии сотрудников // Интернет-журнал «Науковедение» Том 9, №1 (2017) URL: http://naukovedenie.ru/PDF/90EVN117.pdf (Дата обращения: 23.04.2023).
5. Качанов Д.Г.Нарратив в мультимедийной журналистике: анализ российских и зарубежных медиапроектов, Вестн. Моск.. ун-та Сер. 10. Журналистика. 2020. № 1, ст 96 https://vestnik.journ.msu.ru/books/2020/1/narrativ-v-multimediynoy-zhurnalistike-analiz-rossiyskikh-i-zarubezhnykh-mediaproektov/(дата обращения: 11.01.2023):
6. Лукина М. М. Интернет-СМИ : Теория и практика : учеб. пособие для студентов вузов / М. М. Лукина. – М., 2010. – 350 с
7. Симакова, С. И. Сноуфолл как синтез вербального и визуального компонентов в журналистских материалах [Текст] / С. И. Симакова //

Известия высших учебных заведений. Проблемы полиграфии и издательского дела. – 2017. –№ 5. – С. 80–89 (дата обращения: 23.04.2023):

8. Симакова С.И., Енбаева А.П., Исакова Т.Б. Мультимедийный сторителлинг – теоретическое осмысление, Вестник Волжского университета имени В.Н. Татищева № 1, том 1, 2019, С 222-230, URL: https://cyberleninka.ru/article/n/multimediynyy-storitelling-teoreticheskoe-osmyslenie(Дата обращения: 23.04.2023).
9. Степанова Л. Н., Зеер Э. Ф. Soft skills как предикторы жизненного самоосуществления студентов // Образование и наука. 2019. Т. 21, № 8. С. 65–89.
10. Степашкина Е., Суходоев А, Гужеля Д. Исследование профиля надпрофессиональных компетенций, востребованных ведущими работодателями при приеме на работу студентов и выпускников университетов и молодых специалистов, М.: НИУ ВШЭ, 2022. (Современная аналитика образования. № 2 (62), ст. 4 URL: https://ioe.hse.ru/pubs/share/direct/575367109.pdf (Дата обращения: 16.05.2023).
11. Charles R. Mann, A study of Engineering Education, 1918, Boston, URL: https://www.nationalsoftskills.org/downloads/Mann-1918-Study_of_Engineering_Educ.pdf (Дата обращения: 20.01.2023)
12. Lippman L.H., Ryberg R., Carney R., Kristin A. Workforce connections: key “soft skills” that foster youth workforce success: toward a consensus across fields. – Child Trends Publication, 2015. [Электронный ресурс]. URL: https://www.youthpower.org/sites/default/files/YouthPower/resources/Workforce_Connections_Key_Soft_Skills_and_Appendices.pdf (Дата обращения: 20.04.2023)
13. Strauss V. The surprising thing Google learned about its employees — and what it means for today’s students, URL: https://www.washingtonpost.com/news/answer-sheet/wp/2017/12/20/the-surprising-thing-google-learned-about-its-employees-and-what-it-means-for-todays-students/ (Дата обращения: 20.04.2023)

REFERENCES

1. Abashkina O. Soft skills: the key to a career. [Electronic resource].
2. Ananyeva T. Ten competencies that will be in demand in 2020 [Electronic resource].
3. Batsunov S. N., Derecha I. I., Kungurova I. M., Slizkova E. V. Modern determinants of the development of soft skills.

4. Ivonina A.I., Chulanova O.L., Davletshina Yu.M. Modern directions of theoretical and methodological developments in the field of management: the role of soft-skills and hard skills in the professional and career development of employees.
5. Kachanov D.G. Narrative in multimedia journalism: analysis of Russian and foreign media projects.
6. Lukina M. M. Internet media: Theory and practice: textbook. manual for university students.
7. Simakova, S. I. Snowfall as a synthesis of verbal and visual components in journalistic materials [Text].
8. Simakova S.I., Enbaeva A.P., Isakova T.B. Multimedia storytelling - theoretical understanding.
9. Stepanova L. N., Zeer E. F. Soft skills as predictors of students' life self-fulfillment.
10. Stepashkina E., Sukhodoev A, Guzhelya D. Study of the profile of supra-professional competencies demanded by leading employers when hiring students and university graduates and young professionals.
11. Charles R. Mann, A study of Engineering Education.
12. Lippman L.H., Ryberg R., Carney R., Kristin A. Workforce connections: key "soft skills" that foster youth workforce success: toward a consensus across fields.
13. Strauss V. The surprising thing Google learned about its employees — and what it means for today's students.

Артур Багдасарян

Развитие мягких навыков студентов бакалавриата журналистики посредством мультимедийного лонгрида

Заключение

Ключевые слова и выражения: бакалавр журналистики, мягкие навыки, мультимедийный лонгрид, самоанализ, индивидуальная «дорожная» программа, конкурентоспособность.

В современном быстро меняющемся мире формирование мягких навыков обучающегося продолжает оставаться одной из важных задач системы профессионального образования. Будущий профессиональный успех выпускника обусловлен его развитием. Мягкие навыки рассматривались как универсальные практические, коммуникативные и управленческие качества человека, позволяющие эффективно или наилучшим образом выполнять поставленные задачи, обеспечивая желаемый результат. Исследование раскрывает мягкие навыки студентов факультетов журналистики, их взгляды

и оценку 10 изложенных навыков, которые были развиты как посредством различных международных исследований, так и в ходе интервью с рядом работодателей и менеджеров по персоналу в Армении. Выбор мягких навыков также осуществлялся с учетом особенностей организации работы СМИ в условиях современных информационных технологий.

В процессе подготовки профессионального задания, лонгрида, посредством самоанализа наблюдалось влияние мягких навыков и изменение отношения к ним студентов. Мультимедийный обширный рассказ (лонгрид) – журналистский продукт, обязательным условием создания которого является идейно-творческое сотрудничество. Оно одновременно предполагает использование различных публицистических материалов (аудиовизуальных и анимационных материалов, фотографий, графиков, карт и т. д.) и жанров, которые гармонично соединяются в одно целое. Выдвигается подход, согласно которому развитие мягких навыков в системе высшего образования эффективно рассматривать в рамках преподавания профессиональных предметов и выполнения заданий, поскольку мотивация студентов сравнительно высока. Также было подчеркнуто наличие индивидуально разработанной «дорожной» программы развития мягких навыков у каждого студента, которая может стать залогом дальнейших профессиональных успехов.

Artur Baghdasaryan

The development of soft skills of students in the Bachelor of Journalism through multimedia longread

Conclusion

Key words and expressions: Bachelor of Journalism, soft skills, multimedia longread, self-analysis, individual "road" program, competitiveness.

In the contemporary, rapidly changing world, nurturing students' soft skills remains a critical challenge for the professional education system. The future professional success of graduates hinges on the effective development of these skills. Soft skills were considered as universal practical, communication and management qualities of a person that allow them to effectively or best perform assigned tasks, ensuring the desired result. The research examines the soft skills of undergraduate journalism students in Armenia, including their attitudes and assessment of 10 outlined skills. These skills were derived from multiple international studies and interviews conducted with employers and personnel managers. The selection of soft skills was also carried out taking into account the

peculiarities of the organization of media work in the conditions of modern information technologies. While preparing a professional task, a longread, we observed the impact of soft skills on students' attitudes through self-analysis, as well as the changes in their perceptions towards these skills.

Multimedia extensive story (longread) is a journalistic product, the prerequisite for its creation is ideological and creative cooperation. It simultaneously involves the use of various journalistic materials (audiovisual and animation materials, photographs, graphs, maps, etc.) and genres that are harmoniously combined into one. The approach advocates the effectiveness of incorporating the development of soft skills into the higher education system through the integration of professional subjects and tasks, as it significantly boosts students' motivation. The significance of an individually tailored "road" program for the development of soft skills for each student was also emphasized, as it holds the potential to become a key factor in ensuring their future professional success.

Արթուր Բաղդասարյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ լրագրության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից մեդիաբովանդակության խնդիրներ, հանրության հետ կապեր: Հեղինակ է երեք տասնյակից ավելի հոդվածների:
bvartur@mail.ru

Артур Багдасарян – доцент кафедры журналистики Армянского государственного педагогического университетаимени Хачатура Абовяна, кандидат педагогических наук. Область научных интересов: современный медиаконтент, связи с общественностью. Автор более трех десятков статей. bvartur@mail.ru

Artur Baghdasaryan - Associate Professor of the Department of Journalism at ASPU named after Khachatur Abovyan. Candidate of Pedagogical Sciences. Research interests: modern media content, public relations. Author of more than three dozen articles. bvartur@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 14.11.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 21.11.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.